Միքայել Նալբանդյան

Բանաստեղծ

Նմանություն

Քանի բանաստեղծն չունի մուսայից
Մի բան երգելու հատուկ հրաման,
Նորա քնարը միշտ մունջ է մնում,
Ինքը անհոգի, անզոր ու անձայն:

Բայց երբ երկնքից կը փայլի հոգուն
Անաղոտ լույսը պայծառ արևին,
Նա կմոռանա բոլոր աշխարհը,
Այլ չի պատկանիլ նա այս աշխարհին:

Գրիչը ձեռին թղթի դաշտումը
Կվազե արագ, ինչպես եղջերու,
Ո՛չ ոք չէ կարող նորա հակառակ
Իզուր փորձ փորձել կամքը կոտրելու:

Նա այն ժամանակ սուր ունի հատու,
Կըրակ է թափում այրող բերանից .
Մուսան նորանով խոսում է մեր հետ,
Սիրտ է զմայլում նորա երգերից:

Նա այն միջոցին ոչինչ այլ բան չէ,
Բայց եթե թարգման մուսայի խոսքին,

Նորա ասածը, որ նա լսում է,
Մեզի բաշխում է զինչ զոհար անգին:

Ոչինչ դատավոր, ոչինչ իրավունք
Չեն այնքան սուրբ, ճիշդ, ջինջ, քան հայելի,
Որքան դատաստան բանաստեղծ հոգուն
Մի բան ասելում՝ թե չար, թե բարի:

Ողջ մին է նորան՝ եթե թագակիր,
Եթե սոսկական քաղաքացի լոկ .
Պատճառ՝ ուղիղը խոսելից հետո
Պետք է սպասել դառնալու մերկ, բոկ: